

## ԱՂԱՍԻ ԽԱՆՋՅԱՆԻ ՍԽՐԱՆՔՆ ՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

### Գ. Բ. ՂԱՐԻՔԱՆՅԱՆ

Ինչ էլ որ լինեն մեր սիրելի Աղասու մանվան պատճառները, խնդրում եմ քեզ, սիրելի Ալազան, գնաս և իմ կողմից համբուրես նրա շիրիմը:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ  
1936 թ., Փարիզ

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ Աղասի Խանջյանի անունը հատուկ տեղ ունի: Լինելով 20-րդ դարի զավակ՝ նա անցավ այդ ժամանակաշրջանին բնորոշ 30-ամյա ողբերգությունների և հերոսամարտերի բովով:

Աղասի Խանջյանը ծնվել է 1901 թ. հունվարի 30-ին Վան քաղաքում, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Ղևոնդ Խանջյանի ընտանիքում: Սովորել է Վանի կենտրոնական վարժարանում: Նրա հայրենակից Գուրգեն Մահարին հիշում է. «Սովորեք Աղասի Խանջյանի նման» հաճախ լսում էինք մենք Երեմյան դպրոցի աշակերտներս մեր ուսուցիչներից»: 14 տարեկան էր նա, երբ թուրքական զավթիչների կազմակերպած արևմտահայություն մեծ եղեռնից մազապուրծ, հազարավոր գաղթականների հետ միասին Խանջյան ընտանիքը ևս ապաստան է գտնում Երևանում: «Գաղթականների կյանքի սարսափելի պայմանները, — նշել է հետագայում Աղասի Խանջյանը, — խոր տպավորություններ թողեցին ինձ վրա և այդ կապակցությամբ ես շատ էի մտածում պատերազմի, նրա պատճառների և հանցավորների մասին»: Խանջյանը Երևանի Թեմական դպրոցում և էջմիածնի ճեմարանում շարունակում է իր կրթությունը, միաժամանակ մասնակցում հեղափոխական շարժումներին, Հայաստանում Խորհրդային իշխանության համար մղված պայքարին: Ապա սովորելու է գործուղվում Մոսկվա, կուսակցական աշխատանք է կատարում Լենինգրադում: 1928 թ. արդեն տասը տարվա կոմունիստ Խանջյանը գալիս է Երևան՝ ընտրվում Հայաստանի կոմկուսի կենտկոմի երկրորդ, իսկ 1930 թ. առաջին քարտուղար՝ մնալով այդ պաշտոնում մինչև իր եղբերական մահը:

Հայաստանում աշխատելու տարիներին Խանջյանը հաճախակի էր լինում հանրապետության տարբեր քաղաքներում, գյուղերում, ֆաբրիկաներում, գործարաններում, նորակառույցներում, մշակույթի օջախներում: Հայ գրականության գիտակ և ջերմ պաշտպան Խանջյանի հովանավորությամբ 30-ական թվականների կեսերին լույս են տեսնում հայ դասականների՝ Վարդան Այգեկցու, Ֆրիկի, Միսաք Մեծարենցի, Պետրոս Դուրյանի, Երվանդ Յոյանի, Միպիլի ժողովածուները: Երբ Ալազանն ու Նորենցը Մեծարենցի բանաստեղծությունների նոր հրատարակված հատորով ներկայանում են Խանջյանին, նա ասում է. «Կեցցե՛ք, սրանով դուք փրկեցիք Արևմտահայ հատվածի չքնաղ քնարերգությունը, այո, այս ձևով էլ պետք է հրատարակել Դուրյանին, Վարուժանին, Միամանթոյին և ուրիշներին»: Վ. Նորենցը հիշում է, որ Խանջյանը

անգիր գիտեր Մեծարենցի, Դուրյանի շատ ստեղծագործություններ: Գուրգեն Մահարին հիշում է. «1928 թ. ամռանը Խանջյանը Երևան վերադարձավ և անցավ իր պարտականությունների կատարմանը— կենտկոմի երկրորդ քարտուղար: Առաջին քարտուղար ընտրվելուց հետո էլ նա միշտ մոտ կանգնեց մեր հոգևոր կուլտուրային, աշխատում էր 15—18 ժամ, միշտ զվարթ, զգոն և տոկոն: Կարճ ժամանակվա ընթացքում նա գտավ լայն ճանաչում և ժողովրդականություն, ճանաչեց մարդկանց և ճանաչել տվեց իրեն:

Այո, անդիմադրելի էր նրա հմայքը, որովհետև հասարակ էր նաև և անմիջական, գիտեր խոսել և՛ գրագետի, և՛ անգրագետի հետ, թափանցել մարդու սիրտը, նայել մարդկանց, իրերին և երևույթներին պետական մարդու լայնախոհությամբ, սիրով ու զգացությամբ: Սիրում էր նա իր երկիրը, իր ժողովրդին, գիտեր նրա անցյալը, ճանաչում էր նրա ներկան և աշխատում էր նրա մեծ ներկայի և ապագայի համար, նա մի ներդաշնակություն էր տեսականի և գործնականի»:

Ապագա ակադեմիկոս, այն ժամանակ դեռ երիտասարդ գիտնական Ֆիզիոլոգ էգրաս շասրաթյանը, երբ կենդանագրագից Երևան է գալիս, հանդիպում է Խանջյանին: շասրաթյանը այդ մասին պատմում է. «Բանից դուրս է գալիս, որ Խանջյանը հիանալի ֆիզիոլոգ է, գիտի այնպիսի գրքեր, որոնց մասին ես միայն լսել եմ»:

Խանջյանը մշտապես հետաքրքրվում էր Շիրվանզադեի, Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի, Նղիշ Զարենցի, Ակսել Բակունցի, Վահան Թոթովենցի, Գուրգեն Մահարու, Մկրտիչ Արմենի և ուրիշների կյանքով, ստեղծագործություններով: Նա Գ. Սունդուկյանի անվան թատրոնի նոր ներկայացումների առաջին դիտողներից էր, կինոստուդիայի լավագույն կինոնկարների խրախուսողը:

Երևան ձեռագիր վիճակում Աղասի Խանջյանը կարդում է Զարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն և խրախուսում նրա հրատարակությունը: Այնտեղ զետեղված էր «Աքիլեոս, թե՛ Պյերո» ինտերմեդիան, որի գրելու թվականը նշված է «Սկսված է 1929 թ. ապրիլի 29-ին Թիֆլիսում, ավարտված— հունիսի 18-ին Նորքում»<sup>1</sup>: Այս պոեմի շուրջն էր, որ սկսվեցին բամբասանքներն ու հալածանքները: Քաղաքական վիճակը երկրում շատ բարդ էր: Զարենցի ամեն մի «սայթաքման» համար մեղադրում էին Աղասի Խանջյանին, որը ամեն ինչ անում էր մեծ պոետին հարձակումներից պաշտպանելու համար:

Զարենցի մտերիմ, գրող և հասարակական գործիչ Աղասի Վարդանյանը հիշում էր, որ ինքը Թիֆլիսում լսել է «Գիրք ճանապարհին» ժողովածուում զետեղված դրամատիկական պոեմի մասին, որը որպես հակախորհրդային գրվածք հանվել է գրքից, սակայն գաղտնի տարածվել է շայտատանում: Ա. Վարդանյանը կարդացել է «Գիրք ճանապարհին», բայց թե ինչ էր ներկայացնում նրանում զետեղված արգելված պոեմը, չգիտեր: «Եվ ահա մի օր,— հիշում է Ա. Վարդանյանը,— Անդրերկրկոմի ագիտարոպ բաժնի վարիչ ընկ. Բեդիան հանձնեց ինձ այդ պոեմը առանձին գրքույկով և խնդրեց, որ ես գրավոր կարծիք հայտնեմ՝ «արդյոք ճիշտ է, որ պոեմը հակակուսակցական բրնույթ է կրում և ուղղված է ընկեր Ստալինի դեմ»: Հրաժարվել Բեդիայի պաշտոնական առաջարկից ես չէի կարող, խոստացա ծանոթանալ և կարծիքս հայտնել իրեն: Վերցրի պոեմը և դուրս եկա Անդրերկրկոմից փախցած տրամադրությամբ: Պարզ էր, որ նորից էին հետամտում Զարենցին: Գնացի խըմբագրություն, խնդրեցի ինձ շխանգարել և անհամբերությամբ բաց արի գրքույկը՝ «Աքիլեոս, թե՛ Պյերո»— ինտերմեդիա: Իսկույն հիշեցի «Գիրք ճա-

<sup>1</sup> «Գիրք ճանապարհի», Երևան, 1933, էջ 230:

նապարհի»-ն, միևնույն շրիֆտը, Կոչոյանի միևնույն նկարները, նույն ձևավորումը: Կարողում եմ լարված ուշադրութայամբ, աշխատում եմ հասկանալ՝ ով է այդ Աքիլլեսը կամ Պյերոն...

Գիրքը վերցրի գնացի Արշավիր Մելիքյանի մոտ (նա ապրում էր խմբագրության շենքում), որը բացառիկ և անառարկելի հիացմունքով էր խոսում Չարենցի «Գիրք ճանապարհի»-ի մասին: Հարցնում եմ նրա կարծիքը՝ ինչպես է ընկալում նա այդ «ինտերմեդիան»... նորից կարդացինք մի շարք էջեր և եկանք այն եզրակացության, որ Չարենցի այդ գործը ուղղված է ոչ թե Ստալինի, այլ Տրոցկու դեմ: Չարենցն առանց անուններ տալու մերկացնում է Տրոցկուն, ծաղրում է վերջինիս հավակնությունը լինել «Վեհ ողբերգության հերոսը», մի նոր Աքիլլես, այնինչ նա սոսկ մի Պյերո է և ուրիշ ոչինչ, մի Պյերո, որին «առաջնորդի բանակը» ոտնատակ է անում: Իհարկե ինտերմեդիան կարող էր տեղիք տալ և շատ ուրիշ ենթադրությունների, ուստի կարիք չկար մասսայականացնելու այն տվյալ պայմաններում, բայց բոլոր դեպքերում նրա մեջ հակակուսակցական կամ հակաստալինյան արտահայտություն մենք չգտանք: Այդ իմաստով էլ, որքան հիշում եմ, հայտնեցի իմ կարծիքը Բերիային, և նա շտապեց այդ կարծիքի դեմ»<sup>2</sup>: «Աքիլլես, թե՞ Պյերո» ինտերմեդիան «Գիրք ճանապարհի»-ի մեջ տպագրվելուց անմիջապես հետո ժողովածուից հանվել էր և նրա փոխարեն նոր հրատարակության մեջ զետեղվել էին «Արվեստ քերթություն» և «Գիրք իմաստություն» բաժինները՝ տարբեր բանաստեղծություններով: Ըստ որում, նրանց տարեթվերը նշված էին 1933—1934 թթ., մինչդեռ գրքի վրա գրված էր, որ այն տպագրվել է 1933 թ.: «Գիրք ճանապարհի»-ի երկու հրատարակությունների ձևավորումը, էջերի քանակը նույնն էր: «Աքիլլես, թե՞ Պյերոյի» 173—230 էջերի քանակով ժողովածուում զետեղվել էին նոր գործեր, պարզ էր, որ պոեմը հանվել էր ժողովածուն հետապնդումներից փրկելու համար:

«Գիրք ճանապարհի»-ում զետեղված էր նաև Չարենցի «Պատգամ» բանաստեղծությունը, որի վերևից ներքև 2-րդ տառերով Չարենցը գրում էր, — «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»<sup>3</sup>: Սակայն այդ այն ժամանակ դեռ հայտնի չէր ընթերցողներին:

«Գիրք ճանապարհի»-ն բացառիկ երևույթ էր հայ գրականության պատմության մեջ և այժմ էլ այն մնում է որպես հայ գրականության անգերազանց գագաթը:

Իրավացի էր Ա. Խանչյանը՝ գրքի լույս տեսնելուց անմիջապես հետո Արշակ Չոպանյանին ուղարկած նամակում գրելով, որ «մեր գրականությունն այս գրքով բարձրանում է մի նոր բարձր գագաթ»<sup>4</sup>:

Խորապես գիտակցելով այդ բոլորը՝ Չարենցը որոշում է դիմել կոմկուսի գլխավոր քարտուղար Ստալինին: 1933 թ. նոյեմբերի 29-ին, ինչպես Չարենցն է գրում՝ «Իր համար հատկապես դժվար իրադրությունների պայմաններում», նա ստիպված է լինում նամակ գրել Ստալինին: Նամակն ուղարկում է իր հին բարեկամ, ճանաչված գրող Մարիետա Շահինյանին ուղղված նամակի հետ՝ նախաբանով, օգային փոստով: 1933 թ. դեկտեմբերի մեկին Չարենցը 2-րդ նամակն է գրում Մարիետա Շահինյանին, նկարագրում իր և հայ գրականության ողբերգական վիճակը, մի շարք գրողների դեմ ուղղված հալածանքները: Խնդրում այդ մասին տեղյակ պահել այն ժամանակ ՀԱՄԿ(բ)Կ Կենտ-

<sup>2</sup> Ազատի Վարդանյան, Անցած ուղիներով, էջ 390—391:

<sup>3</sup> Եղիշե Չարենց, «Գիրք ճանապարհի», Երևան, 1933, էջ 269—270:

<sup>4</sup> «Ապագա», Փարիզ, 9 դեկտեմբերի, 1933:

կոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Ա. Ի. Ստեցկուն և, եթե հնարավոր է, անձամբ Ստալինին:

Չարենցը և Շահինյանը տարիներ շարունակ սերտ կապերի մեջ էին: Մանթասգել էին 1920 թ. սկզբներին, բազմիցս հանդիպել և զրուցել: Շահինյանը բարձր էր գնահատում Չարենցի պոետական հանճարը: Իր հուշերում նա գրել է, որ «Չարենցի հետ բոլոր վեճերում ինձ չի լքել նրա հանճարության զգացումը»<sup>5</sup>: 1926—27 թթ. նշանավոր թարգմանիչ և հայ արվեստի մեծ բարեկամ Յակով Խաչատրյանը՝ Մարիետա Շահինյանի ամուսինը, հայերենից ռուսերեն է թարգմանում Չարենցի «Երկիր նաիրի» վեպը, որը պետք է գրախոսեր և առաջաբանը գրեր Մ. Շահինյանը: Խնդրում էր դիմել նույնիսկ Ստալինին՝ իրեն սպանությունից փրկելու համար. հույս էր հայտնում, որ Մարիետա Սերգենյանն այս բախտորոշ պահին իրեն չի լքի, քանի որ դա նրա անձնական գործը չէր, այլ գլխավորապես կոմկուսի և Խորհրդային իշխանության հեղինակության հարցն էր<sup>6</sup>:

Չարենցը նշում է, որ դեռևս ձեռագրերում Խանջյանը կարդացել էր գիրքը: Նրա հրապարակումից հետո, օգտվելով Խանջյանի բացակայությունից, Չարենցի գրքի դեմ այնպիսի մի մեղադրական գործ է հարուցվում, որ պոետն այն համեմատում է «Բեյլիսի գործի» հետ: Վերադառնալով արձակուրդից՝ Խանջյանը շեղյալ է հայտարարում այդ մեղադրանքները, և «Գիրք ճանապարհին» կյանքի իրավունք է ստանում, ջերմորեն ընդունվում ընթերցող լայն շրջանների կողմից: Չնայած դրան, գիրքը, հատկապես նրանում գետնեղված «Աքիլեոս», թե՛ Պյերոս» ինտերմեդիան, «արևին նետած քարերը» շատացրին: 1933 թ. նոյեմբերի 14-ին հայ կոմկուսի կենտկոմի քարտուղարությունը որոշում է ընդունում «Հայպետհրատի արտադրանքի իդեոլոգիական անկայունության մասին», որի առաջին կետով արգելվում է «Գիրք ճանապարհին» հրատարակությունը: Չարենցը հեռացվում է Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչի պաշտոնից, որը նա զբաղեցնում էր 1928 թվականից:

Մեր կարծիքով ճիշտ չեն նրանք, ովքեր ելնելով Ա. Խանջյանի մի շարք էլույթներում հղած սխալ արտահայտություններից, այդ թվում նաև Չարենցի հասցեին եղած քննադատությունից, եզրակացնում են, որ Խանջյանը նրան, Ակսել Բակունցին և մյուսներին լրջորեն մեղադրել է նացիոնալիզմի մեջ: Տեսնելով անձամբ Ստալինի, Բերիայի՝ Չարենցի և մյուս հայ մեծերի նկատմամբ առանձնակի հետաքրքրությունը, հետապնդումները և շարագործ մտադրությունները, Խանջյանն ամեն ջանք գործադրում էր նրանց ստեղծագործելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու: Այդ են վկայում նաև վերջին տարիներս հրատարակված մի շարք փաստաթղթեր, հենց իր՝ Չարենցի խոստովանությունն ու վերջին տարիների ստեղծագործությունները:

1933 թ. կեսերին Ա. Խանջյանի նախաձեռնությամբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ Չարենցը վերականգնվում է Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչի պաշտոնում, որից նա ազատվել էր իր բացակայությամբ:

Այդ պաշտոնում Չարենցի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ, Խանջյանի ջերմ պաշտպանությամբ հրատարակվում է առաջին մեծածավալ ռուս-հայերեն բառարանը, «Հոկտեմբեր-նոյեմբեր» տարեգիրքը, «Արևմտահայ գրողների անտալոգիան», Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի բանաստեղծությունների ժողովածուները, ռուս, վրացի և համաշխարհային գրականության դասականների երկերը, որոնք ոչ միայն գրական, այլև տպագրական գլուխգործոցներ էին և հսկայական դեր էին կատարում հայ ընթերցող-

<sup>5</sup> «Հուշեր Եղիշ Չարենցի մասին», Երևան, 1986, էջ 289.

<sup>6</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2, էջ 227—229.

ների հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակութեան գործում: Վ. Ալազանը հիշում է. «Երբ Վ. Նորենցը և տողերիս գրողը ձեռնամուխ եղավ Մ. Մեծարենցի «Երկերի լիակատար ժողովածուի» խմբագրման և հրատարակման գործին, այդ շատ ոգևորեց խանջյանին: Նա անընդհատ հետաքրքրվում էր գրքի տպագրման ընթացքով: Նրա հետաքրքրությունը բավարարություն տալու համար ես գրքի յուրաքանչյուր մամուլը տպվելուց հետո այն վերցնում էի և գնում խանջյանի բնակարանը:

Մի անգամ, երբ Մեծարենցի գրքի հերթական մամուլը տարա, խանջյանը հիվանդ պառկած էր անկողնում, մամուլը վերցնելով ձեռքիցս, առանց որևէ բան կարդալու, սկսեց անգիր արտասանել:

«Գիշերն ան՛ւշ է, գիշերն հեշտագին...»:

Երբ Ալազանն ու Նորենցը ականարկում են «ձախ» քննադատներից սպասվող վտանգի մասին, խանջյանը պատասխանում է. «Իսկ դուք ինչո՞ւ եք կարևորություն տալիս այդպիսի քննադատներին: Մեծարենցին էլ շատ են քրննադատել, սակա՛հն այդ «քննադատներից» ինչ է մնացել: Իսկ Մեծարենցը կա և կմնա մեր գրականության մեջ»:

Կարո Մելիք-Օհանջանյանը հիշում է այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերում էին Ա. խանջյանն ու Ծ. Չարենցը «Սասնա ծռերի» հրատարակության նկատմամբ: «Ա. խանջյանը, — գրել է Կ. Մելիք-Օհանջանյանը, — որը սիրում էր հայ ժողովրդական բանահյուսությունը, զգում էր նրա համն ու հոտը, բույրն ու երանգը, մտքերի ու զգացմունքների վճիտ վեհությունը, առաջարկում է Ծ. Չարենցին, որն այդ տարիներին գլխավորում էր Պետհրատի գեղարվեստական գրականության բաժինը, կազմակերպել «Սասնա ծռերի» հրատարակության գործը՝ լույս ընծայելով ծանոթ պատումները և գրի առնելով նորանոր պատումներ: Միաժամանակ նա խորհուրդ էր տալիս այդ աշխատանքը կենսագործել կոլեկտիվ ուժերով՝ նկատի ունենալով հրատարակության ծավալը, հավաքման, գրառման ծանրությունը, ինչպես և բարբառայնության դժվարությունները:

Այդ զրույցից մի քանի օր անց Չարենցը եկավ Կուլտուրայի պատմության ինստիտուտ և միասին խորհրդակցեցինք Ա. խանջյանի առաջարկությունը կենսագործելու մասին: Մենք մի առ մի թվարկեցինք բոլոր նրանց, որոնք զբաղվել են կամ զբաղվում են մեր ժողովրդական բանահյուսությամբ և հատկապես «Սասնա ծռերի» հավաքման, գրառման և ուսումնասիրության գծով, և եկանք այն եզրակացության, որ վեպի խմբագրումը պետք է անպայման գլխավորի մեր բազմավաստակ բանասեր-բանագետը՝ ընկ. Մ. Աբեղյանը, ապա ուրեմն, նախ և առաջ, պետք է նրա հետ բանակցություններ վարվի, նրա կարծիքն իմացվի»:

Այն տարիների Լուսավորության ժողկոմ Արտո Սղիազարյանը պատմում է 1936 թ. գարնանը խանջյանի հետ Չարենցին կատարած իրենց այցելության մասին: «... Չարենցի բնակարանում էինք: Այդ այցելությունը շատ աշխուժացրեց Չարենցին: Նկատեցի, որ թե խանջյանը և թե Չարենցը խոսում էին իրար հետ «ի սրտե», առանց որևէ «վարագուլիի»։ Համենայնդեպս այն, ինչ որ ասվում էր երկուստեք՝ արտահայտությունն էր իրենց անկեղծ համոզման, զգացմունքների, ապրումների:

Հանրածանոթ էին Չարենցի ծավալուն գիտելիքները արվեստի և գրականության մասին: Նա ի վիճակի էր, առանց որևէ կոնսպեկտի, ժամերով խոսել հին հունական դասական գրականությունից, միջնադարից, ինչպես նաև արդի համաշխարհային գրականության մասին: Նա լիովին տիրապետում էր ռուսական թե դասական և թե սովետական շրջանի գրականությանը: Էլ չեմ

խոսում հայ միջնադարյան, նոր գրականութեան մասին, որոնք նա կատարելապես գիտեր:

... Ա. Խանջյանը նույնպես գրականութեան «սիրահար» էր և միշտ կարդում էր ու հետևում գրական բոլոր նորութիւններին:

Ես սպասում էի, որ զրույցի առարկան կհանդիսանա մեր արդի գրականութիւնը և նրան վերաբերող հարցերը:

Անսպասելի կերպով Չարենցը սեղանի վրայից վերցրեց երկու հայկական մագաղաթյա գրքեր և դիմելով Խանջյանին ասաց.

— Ինձ համար նոր աշխարհ է բացվել: Մի տես, թե ինչքան պարզ և վարպետորեն են գրել մեր նախնիքը: Ես գերված եմ դրանցով և անհագուրդ կարդում ու ուսումնասիրում եմ դրանք:

Խանջյանը վերցրեց դրանցից մեկը, թերթեց, կարդաց մի քանի հուզումնալից տեղեր, հետո հավանութիւն տվեց պոետի կարծիքին:

Այնուհետև Չարենցը ծանոթացրեց իր մոտ եղած և ձեռք բերած գրական նորութիւնները, որոնցից շատերը ծանոթ էին Խանջյանին:

Այդ այցելութեան ժամանակ Չարենցը ոչ մի անհատական, անձնական հարց չդրեց Կենտրոնական Կոմիտեի քարտուղարի առաջ: Բանաստեղծը ջերմ մակագրութեամբ մի գիրք նվիրեց Խանջյանին: Սրտառուչ կերպով բաժանվեցինք»<sup>7</sup>:

Խանջյանը հատուկ ուշադրութիւն է նվիրել հայրենադարձութեան կազմակերպմանը և սփյուռքահայութեան առաջավոր ուժերի հետ կապերի ամրապնդմանը: 1932 թ. վերջին Երևանում նա ընդունում է Փարիզից ժամանած սփյուռքահայ նշանավոր գործիչ, հայ մշակույթի երախտավոր Արշակ Չոպանյանին, զրուցում է նրա հետ հայ դասական և արևմտահայ գրականութեան մասին, խորհրդակցում Հայաստանի քաղաքական սահմանների շուրջը: Պահպանվել են Ա. Չոպանյանի նամակը Խանջյանին և Խանջյանի նամակը Չոպանյանին՝ այդ հարցերի վերաբերյալ: Խանջյանին գրած նամակում Չոպանյանը հետաքրքրվում էր Խորհրդային Հայաստանից արտասահման անցնող հայերի հարցով, որն այն ժամանակ որոշ շրջանակներում ներկայացվում էր որպես խմբակային փախուստ «դժոխքից»: Հայաստանում եղած ժամանակ Չոպանյանն ականատես է եղել հակառակ պատկերի, որի մասին նա գրել էր Փարիզում լույս տեսնող «Ապագա» թերթում: «Թե Խորհրդային Հայաստանը ոչ դժոխք է և ոչ վայաստան,— գրում է Չոպանյանը,— թե սով չկա հոն ու դժոխք ներկայացնող խմբագրականներով, ես նամակով մը հարցուցի Պ. Ա. Խանջյանին թե ինչպես կբացատրե այդ խմբական փախուստները: Այն միջոցին ուր կգրեի այդ նամակս, Պ. Սահակ Տեր Գաբրիելյանի նամակը (որ հրատարակվեց) դեռ չէր հասած հոս: Գրելու համար այն հոդվածները որ երևցան «Ապագայ»-ի մեջ ես պետք շունեի Երևանեն գալիք որևէ տեղեկութեան: Թե Խ. Հայաստանը ոչ դժոխք է, ոչ վայաստան, թե սով չկա հոն, թե բոլոր ներգաղթողներուն հոն բնակարան ու աշխատանք կուտան, ատիկա հայտնի էր ինձի, և արդեն փախչողներու նամակները մեծ մասամբ իրենց մեջ կպարունակեին իրենց հերքումը, բայց կուզեի գիտնալ թե արդո՞ք այդ հազարավոր ներգաղթողներու տեղավորելուն, գործի դրվելուն դժվար աշխատանքին մեջ տեղ տեղ ստորադաս պաշտոնյաներու կողմն անհոգութիւններ, այս կամ այն տեսակ սխալներ չէին գործված, և կիսնդրեի որ կառավարութիւնը հաճե՞ր քննութիւն մը կատարել և եթե գործած էին հոսկ կամ հոն մանրամասնութեան պակասութիւններ, միջոցներ ձեռք առնվեին որպեսզի հաջորդ կառավաններու հասնելուն՝ այդպիսի ցանցառութիւններ չկրկնվեին»:

<sup>7</sup> Հիշողութիւններ Եղիշե Չարենցի մասին, էջ 255—256:

Ստանալով Խանջյանի պատասխանը՝ Չոպանյանն այն հրատարակում է «Ապագա» թերթի 1933 թ. դեկտեմբերի 9-ի համարում: «Հարգելի բարեկամ,— գրում էր Խանջյանը,— վերջին մեկ-մեկուկես տարում ընդունեցինք մոտ 8500 գաղթականներ: Սրանց գերակշռող մեծամասնությունը այսօր արդեն արմատավորվել է մեր երկրում, այսինքն ընտելացել ու ընտելանում է կյանքի, կենցաղի և սոցիալատանքի նոր պայմաններին. ավելին, արդեն գոհ է այդ պայմաններից: Սակայն եղան նաև 100—150 գաղթականներ, որոնք, չնայած մեր համապատասխան մարմինների բոլոր ջանքերին, չկարողացան կամ չկամեցան ազնիվ աշխատանքի միջոցով կապվել երկրի հետ: Այդ մարդիք— ես հատուկ քննության միջոցով այդ հաստատեցի— կարճ ժամանակում 3—4 անգամ տեղից տեղ անցան, փոխեցին աշխատանքի բնույթը, բայց միշտ էլ դժգոհ մնացին: Խոսք չի կարող լինել այդ մարդկանց նկատմամբ՝ ոչ սովի, ոչ էլ «անտանելի» պայմանների մասին: Տարակույս չպետք է ունենաք, որ յուրաքանչյուր ներգաղթածին Հայաստան գալուն պես տվել ենք որոշ աշխատանք և բնակության տեղ ( ) . ճիշտ է՝ բնակարանները ոչ միշտ անհրաժեշտ հարմարություններով, դուք ինքներդ տեսաք որ երկրի բնիկների մի մասն էլ բնակարանի տեսակետից այնքան նախանձելի պայմաններում չի գտնվում դեռ: Ես անձամբ տեսա և համոզվեցի և Անի-Պեմզայում, և Արտիկ-Տուֆում և այլ տեղերում, որ մեր տնտեսավարների մեծ մասը նրբազգաց և ուշադիր վերաբերմունք է ունեցել... հանդեպ ներգաղթածներին»<sup>8</sup>: Վերոհիշյալ նամակների մասին իմանում է այն ժամանակվա կուսակցության Անդրբերկրոմի քարտուղար Լ. Բերիան: Որակում որպես «նացիոնալիստական, հակահեղափոխական»:

1934 թ. հունվարին հայկոմկուսի 9-րդ համագումարին ՀԿԿ աշխատանքների մասին տված հաշվետու զեկուցման մեջ Խորհրդային Հայաստանի գրականության վերջին երկու տարվա նվաճումների թվում առաջին հերթին Խանջյանը նշում է Չարենցի «Երկերը», «Երկերից» հետո սպազորված մի շարք նոր բանաստեղծություններ և պոեմներ, որոնք իրենց առանձին թերություններով հանդերձ գրական աշխի ընկնող քայլեր են, նոր, մնայուն գործեր»: Նույն տարվա օգոստոսին Հայաստանի Խորհրդային գրողների 1-ին համագումարում ունեցած ելույթում Խանջյանը Չարենցի ստեղծագործությունները համարում է «մեր այսօրվա պայքարին անմիջականորեն նվիրված ստեղծագործություններ»: Խանջյանի այս ելույթը Չարենցն անվանում է փայլուն, ուսանելի, որը բացառիկ նշանակություն ունի մեր գրականության հետագա զարգացման համար:

Հիշում եմ, այդ օրերին մորս՝ Արմենուհի Ղարիբջանյանի հետ Երևանում եղանք ընկ. Խանջյանի մոտ, նրա աշխատասենյակում՝ ՀԿԿ Կենտկոմի շենքում: Ես ավարտել էի Լենինականի 7-ամյա դպրոցը և մեծ ցանկություն ունեի կրթությունը շարունակել Երևանի Ն. Կ. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում, որն այն ժամանակ ցուցադրական էր կոչվում և Հայաստանի լավագույն կրթօջախներից էր: Ա. Խանջյանը մեզ ընդունեց սիրալիր: Զրույցի ժամանակ նա հետաքրքրվեց իմ հետագա ուսման հարցերով և համապատասխան կարգադրություններ արեց: Զրուցում էինք, երբ քարտուղարուհին ներս մտնելով զեկուցեց, որ հեռախոսի մոտ է Չարենցը, նրանց խոսակցությունը կարճ տևեց, սակայն ես զգացի այն ջերմ վերաբերմունքը, որ ունեւր Խանջյանը Չարենցի նկատմամբ: Հեռախոսափողը վայր դնելով՝ ընկեր Խանջյանը, դիմելով ինձ, հարցրեց.

— Չարենցից ի՞նչ ես կարդացել:

<sup>8</sup> «Ապագա», 9 դեկտեմբերի, 1933:

— Շատ բան,— պատասխանեցի ես կտրուկ և կանգնեցի՝ պատրաստ արտասանելու:

— Իսկ «Գանգրահեր տղան» գիտե՞ս,— հարցրեց Խանջյանը:

— Գիտեմ, թույլ կտա՞ք արտասանել:

— Արտասանիր,— ժպտալով ասաց նա և նայեց մորս կողմը, որ հպարտ ժպիտը դեմքին՝ սպասում էր:

Ես սկսեցի՝

Փակում եմ հոգնած աչքերս մի պահ

Եվ տեսնում եմ ես— այնքա՛ն, այնքա՛ն պարզ.—

Այստեղ կանգ առա: Ընկ. Խանջյանը կարծելով, որ շարունակությունը մոռացել եմ կամ շփոթվել, շարունակեց.

Գալիֆ մի գարուն, վառ մի օր օրհաս,

Երկինքը կապույտ, օրը հրավառ:

Խանջյանի ողբերգական մահը՝ 1936 թ. հուլիսի 9-ին, որ ցնցեց բոլորին, արտակարգ վիշտ պատճառեց Չարենցին: Այդ մասին իրենց հիշողություններն են թողիլ Գուրգեն Մահարին, Վաղարշակ Նորենցը, Գևորգ էմինը, Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ:

Գուրգեն Մահարին հիշում է Չարենցի ապրումները, ինչպես այն ժամանակ էին ասում, «Մեծ վանեցու»՝ Աղասի Խանջյանի համար, երբ սկսվել էին Բերիայի հետապնդումները Խանջյանի դեմ: Չարենցը «գանգատվեց,— հիշում է Մահարին,— խանգարում են Բերիայի ագենտները, շին թողնում, որ մարդը հանգիստ աշխատի...

Լոկեց մտախոհ, ապա՝

— Ա՛յ տղա, ամբողջ գիշեր աշխատել եմ, ու շարունակ մտածել, եթե աստված ոչ անի Աղասին թողնի, հեռանա Հայաստանից, ում ընտրենք 1-ին քարտուղար, ի՞նչ ես կարծում»<sup>9</sup>:

Լսելով Խանջյանի սպանության բոթը՝ Չարենցը, մտնելով նրա թաղման թափորի մեջ, մոտենում է նրա դագաղին: «Դագաղին պսակներ չկան, բայց կան ծաղիկներ,— հիշում է Մահարին,— ձախ քունքի վերքը ծածկում է մի վարդ. ներս մտավ արագ (խոսքը Չարենցի մասին է— Գ. Ղ.), մոտեցավ՝ ասես մի շտապ հարց տալու մտադրությամբ: Արագ էլ ետ քաշվեց, իջավ ներքև և մի բաժակ ջուր խնդրեց.

— Տեսա՞ր, ինչ եղավ»<sup>10</sup>:

Խանջյանի մահվան կապակցությամբ Չարենցի խոր ապրումների մասին Վաղարշակ Նորենցը գրել է.

«Այդ եղբրական մահվան պարագաներն անվերջ զբաղեցնում էին նրա միտքը: Շարունակ դրա մասին էր խոսում.

— Այ տղա, դու պատկերացնում ես, թե ինչ ահավոր փոթորիկ է եղել այդ մարդու գլխում և սրտում, ինչ սաստկությամբ սամո՞ւմ է անցել նրա ներքին, աշխարհով և նրան հասցրել ճակատագրական ակնթարթին... նա իր անձնական կենցաղում սրբի նման մարդ էր, ոչ խմում էր, ոչ ծխում և ոչ էլ...

Անվերջ մտորում էր Խանջյանի մասին, դատում, ենթադրություններ և եզրակացություններ անում: Նա իր այդ ապրումներն ու մտածումները զեղում էր նաև բանաստեղծությունների մեջ: Ինձ կարդաց այդ օրերին գրված սոնետների մի փունջ՝ «Նաիրյան դոֆին» ընդհանուր խորագրով: Այդ սոնետ-

<sup>9</sup> Գուրգեն Մահարի, Երկերի ժողովածու, հինգ հատորով. հ. 5, Երևան, 1989, էջ 512:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 496:



ներից ոչ մեկը դեռ չի տպագրված: Գուցե դրանք պահպանվել են բանաստեղծի թղթերի մեջ»:

Նորենցն այդ ժամանակ չգիտեր, որ դրանք պահպանվել են, գտնվել և 1983 թ. հրատարակվեցին Զարենցի «Անտիպ և չհավաքված երկերում»:

\* \* \*

Ստորև տպագրում ենք Արշակ Զոպանյանի՝ Աղասի Խանջյանի հիշատակին տպագրված մահախոսակոսնը, որը լույս է տեսել 1936 թ. Փարիզում հրատարակված «Անահիտ» հանդեսում (№ 5, սեպտեմբեր-հոկտեմբեր):

Աղասի Խանջյան.— Անակնկալ և մեծապես տխրառիթ դեպք մը եղավ Աղասի Խանջյանի եղբրական մահը, պատճառները որոնք հառաջ բերին չքացումը այդ երիտասարդ գործիչին, որ համակ եռանդ էր ու նվիրում և որ մոտ 8—9 տարի է ի վեր իբրև Խ. Հայաստանի ղեկավարներուն առաջինը, անըսպառ աշխաստասիրություն ցույց տված էր, և գործիչի ձիրքեր խոսելու և գրելու փայլուն կարողությանց հետ, որոնց մեջ կզգացվեին զարգացած միտք մը և կրակոտ հոգի մը, մեզի որոշապես ծանոթ չեն: Ինչ որ այդ մասին գրվեցավ արտասահմանի մեջ, հիմնված է ենթադրությանց վրա: Ծշմարտությունը ամբողջապես և անայլայլ կերպով չպիտի կարենայ յայտնվիլ մեզի մինչև որ վավերական ու լիակատար տեղեկություններ չունենանք: Գալով պաշտոնական հայտարարությանց, որոնք հանգուցյալին անձնասպանությունը կհիշատակեն առանց որևէ մանրամասնություն տալու և որոնք դատապարտության և անարգանքի բառեր միայն կպարունակեն անոր մասին, ու տարիներով շարաչար աշխատած, իր երկրին ու ժողովրդին, ու ամբողջ Խ. Միության ծառայություն մատուցած այդ գործիչին վաղաժամ անհետացման համար ցավ հայտնող խոսք մը իսկ չունի, այդ հայտարարությունները մեզի անհասկանալի կմնան: Ինչպես Խանջյանը, որ դեռ քանի մը ամիս առաջ Լենինյան շքանշանը կստանար Ստալինեն իբրև հարազատ ու արժեքավոր համայնավար գործիչ, հանկարծ կմեղադրվի իբրև թույլ, անարի, նույնիսկ «երկերեսանի» ու կամբաստանվի իբրև Հայաստանին մեջ, որպես թե գոյություն ունեցող «տրոցկիական», «նացիոնալիստական» հոսանքներու դեմ կռվելու համար հարկ եղած կորովը ցույց չտվող, նույնիսկ զանոնք գաղտնի կերպով խրախուսող, չենք կրնար ըմբռնել ասիկա: Զենք կրնար նաև արդեն ըմբռնել թե ինչպես ծայրահեղ ձախ հեղափոխականությունը, որ էականապես ապազգային Թոռցկիի մը ուղղություն է, կրնայ միանալ ազգայնամուլ ձգտումներ ներկայացնող հոսանքներու: Այս կետերուն և դեռ ասոնց նման ուրիշ կարգ մը մուծ ու կնճռոտ կետերու վրայ չեմ ուզեր ծանրանալ ներկայ րոպեին, ու մեր սրտին տիրող զգացումը՝ Խանջյանի պես թանկագին ուժի մը կորուստին ազդած խորունկ ցավն է: Ծպավորությունը, զոր իրմե ստացա շորս տարի առաջ Երևան գտնված միջոցիս, իրեն հետ ունեցած երկու երկար տեսակցութեանցս ընթացքին, տպավորություն զոր հաստատեցի իր շատ մը ընկերներուն տված ներբողալից տեղեկությունները և զոր ամբացուցին մանավանդ անկից ի վեր հնազանդեալ հայտնվող իրողությունները այն եղավ, որ այդ սուր մըտքով և ուժեղ խառնվածքով Վանեցի գեղեցիկ ու ավյունոտ երիտասարդին մեջ ներդաշնակորեն և անկեղծորեն միացած էին մարքսյան համոզված գաղափարապաշտ գործիչը և իր երկիրն ու ցեղը բնական առողջ սիրով մը սիրող ու համայնավար ուժիմին օգնությամբ անոր վերականգնման, անոր առաջադիմության անընդհատ, տքնաջան, սպառիչ նվիրումով աշխատիլը հըրայրք մը, կեանքի նպատակ մը դարձուցած հայր: Եվ այդ տպավորությունս անկից ի վեր ես արտահայտեցի խոսքով ու գրչով քանի քանի անգամ: Այսօր

շատերը գաղութահայութեան մեջ կտեսնեն որ իմ տպավորութիւնս ու ատով կազմված կարծիքս ճիշտ են եղած: Այս վերջին ութ-ինը տարվան ընթացքին, ինչքան որ բարեկամներ տեղի ունեցան և. Հայաստանի մեջ, ինչքան որ ամեն տեսակի հանրագուտ գործեր հաստատվեցան: Ինչքան որ ճարտարարվեստ, երկրագործութիւն, գրականութիւն, թատրոն, երաժշտութիւն, կերպարվեստներ, զարգացում ցույց տվին, ինչքան որ մեծ ու օգտակար ծրագիրներ— Աղստաֆայի երկաթուղի, բազալթի հալման գործարան, արհեստական քառուկի գործարան, Չորագէս, ներգաղթի ձեռնարկներ, ևն.— իրականացման ճամբուն մեջ մտան, այդ բոլորին մեջ անշուշտ դեր ունեցան ուրիշ համայնավար կամ խորհրդային պատվական հայ գործիչներ ալ, բայց ինձի կթվա թե կարևորագույն բաժինը Աղասի Խանջյանինը եղավ, ժողովրդին ծառայելու անոր բուռն ցանկութեանը, անոր անհատնում եռանդին և անխոնջ աշխատասիրութեանը, անոր զարգացած ու լայն մտքին, մշակութային արժեքներու հանդեպ անոր ջերմ սիրոյն և խոր ըմբռնողութեան: Անիկա կը պաշտեր գեղարվեստն ու գեղեցիկ գրականութիւնը, բարեկամ ու պաշտպան էր տաղանդավոր արվեստագետներու և գրողներու: Ան համոզված էր թե ընկերային վարդապետութեանց և կառավարական սխտեմներու լավագույնը մարքսյան վարդապետութիւնը և համայնավար ուժիմն է, բայց և կը փափակեր որ այն ցեղը, որուն մեկ զավակն էր ինքն ալ՝ մեծագույն օգուտը քաղեր այդ ուժիմնն և իր աշխատավոր ու ստեղծագործ տարրի բոլոր շահը կարենար տալ բովանդակ արդիւնքը, երևան բերել ի պատիվ իրեն և օգուտ համայն մարդկութեան, վերջին հողվածը, որի իր գրչեն ելել է, Պրավդային մեջ հրատարակված այն ռուսերեն հողվածն է ուր վերջին տասնամյակին Խորհ. Հայաստանի մեջ կատարված առաջադիմութեանց, իրականացած գործերուն թվումն ըրեր և արժեքն ի վեր հանիր էր:

Օր մը անշուշտ անաշու ու իրազեկ հայ գրագետ մը պիտի շարադրե մանրամասն ու ճշգրիտ կենսագրութիւնը այդ տաղանդավոր ու բազմարդյուն գործիչին, որ ունեցավ գեղեցիկ կյանք մը և ողբերգական մտայն վախճան մը, և որուն անունը հայ ցեղի պատմութեան մեջ պիտի մնայ անջինջ՝ ժողովրդին լավագույն ծառայողներու լուսավոր անուններուն առաջին գծին վրայ:

**Г. Б. ГАРИБДЖАНЫЯН — Подвиг и трагедия Агаси Ханджяна.**— Агаси Ханджян занимает выдающееся место в истории армянского национально-освободительного движения. Являясь сыном своего времени, он прошел через горнило героических свершений и испытал трагедию 30-х годов.